Վրաստանի նախագահի 2018 թվականի հոկտեմբերի 28-ի ընտրությունների համար

Սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողների հետ խոսելու էթիկետի և վարքի նորմերի պահպանման մասին

ՀՐԱՀԱՆԳ

2018 թվական

Ո՞վ է համարվում սահմանափակ հնարավորություն ունեցող անձ:

Սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց են հատկացվում՝ անձինք ֆիզիկական, հոգեկան, ինտելեկտուալ կամ զգայական կայուն խախտումներով: Նման անհատները, հասարակական կյանքում լիարժեք և արդյունավետ մասնակցություն ունենալու ժամանակ, հաճախ խոչընդոտի են հանդիպում, ինչի պատճառով նրանք հասարակության այլ անդամների հետ հավասար պայմաններում չեն:

Քաղաքական և հասարակական կյանքում սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց մասնակցության երաշխիքները

Համաձայն ՄԱԿ-ի կոնվենցիայի[1], Կոնվենցիայի մասնակից պետություններն ապահովում են սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց քաղաքական իրավունքներ, այս իրավունքներից օգտվելու հավասար հնարավորություններ, և պարտավորություն են ստանձնում ապահովել սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց քաղաքական և հասարակական կյանքում հավասար, արդյունավետ և լիարժեք մասնակցություն անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով, ինչը ենթադրում է սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց իրավունք քվեարկել կամ քվեարկվել (ընտրվել): Այս նպատակով այլ միջոցների հետ մեկտեղ.

- ապահովում են ընտրական ընթացակարգերի, միջոցների և նյութերի մատչելի, պարզ հասկանալի և կիրառելի ձևաչափ,
- պահպանում են սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց կողմից ընտրությունների և ժողովրդական հանրաքվեների քվեարկությանը գաղտնի, սպառնալիքներից ազատ ճանապարհով մասնակցության, ինչպես նաև ընտրություններին սեփական թեկնածությունն առաջադրելու, պետական կառավարման բոլոր մակարդակներում պաշտոններ զբաղեցնելու և հանրային գործառույթների իրականացման իրավունք, անհրաժեշտության դեպքում օժանդակ և նոր տեխնոլոգիաների կիրառմանն աջակցելով,
- ապահովում են սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, որպես ընտրողների, ազատ կամարտահայտում և, դրա հետ կապված, անհրաժեշտության դեպքում, նրանց խնդրանքի հիման վրա, իրենց կողմից ընտրված անձի կողմից օգնություն քվերակության ընթացակարգում:

1 Վրաստանը 2014 թվականին վավերացրել է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիան: Կոնվենցիայի 29-րդ հոդվածը սահմանում է սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց՝ հավասար, արդյունավետ և լիարժեք մասնակցություն քաղաքական և հասարակական կյանքին:

Տերմինների բացատրություն

Տեսողությունից զուրկ – մարդ, ով չի տեսնում

Տեսողության խնդիրներ ունեցող – մարդ, ով ունի թույլ տեսողություն

Վերին վերջույթներ չունեցող – մարդ, ով զուրկ է վերին վերջույթներից

Սայլակից օգտվող – մարդ, ով տեղաշարժվում է սայլակով

Լսողությունից զուրկ – մարդ, ով չի լսում

Լսողության խնդիրներ ունեցող – մարդ, ով թույլ լսողություն ունի

Աջակցություն ստացող – աջակցություն ստացող է գործունակ հոգեբանական-սոցիալական կարիք ունեցող անձը, այսուհետ՝ աջակցություն ստացող, այսինքն՝ 18 տարին բոլորած անձը, ով ունի կայուն հոգեկան, մտավոր/ինտելեկտուալ խանգարումներ, որոնց՝ տարբեր խոչընդոտների հետ փոխներգործությունը հնարավոր է խանգարի հասարակական կյանքում նրա լրիվ և արդյունավետ մասնակցությանը՝ ուրիշների հետ հավասար պայմաններում: Միևնույն ժամանակ, նշված խոչընդոտները առանց համապատասխան խորհուրդի և օգնության նշանակալիորեն բարդացնում են անձի կողմից սեփական կամքի ազատ արտահայտումը և տեղեկացված և գիտակցված ընտրության կատարումը:

Սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց հետ խոսելու էթիկետը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը սահմանափակ հնարավորություն ունեցող անձի հետ խոսելու ժամանակ պետք է օգտագործի հետևյալ տերմինները.

- սահմանափակ հնարավորություն ունեցող անձ,
- տեսողությունից զուրկ կամ տեսողական խնդիրներ ունեցող,
- լսողությունից զուրկ կամ լսողության խնդիրներ ունեցող,
- սայլակից օգտվող:

Ուշադրությո՛ւն

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը սահմանափակ հնարավորություն ունեցող անձի հետ խոսելու ժամանակ **չպետք է օգտագործի** հետևյալ տերմինները՝ հաշմանդամ, անդամալույծ, կույր, խուլ ու համր, սայլակին գամված, մտավոր հետամնաց, դաուն, աուտիկ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը սահմանափակ հնարավորություն ունեցող անձի հետ խոսելու ժամանակ պետք է նկատի ունենա հետևյալը.

- անմիջապես ընտրողին դիմի, և ոչ թե՝ նրան ուղեկցող անձին,
- ընտրողին հարցնի, թե նա արդյոք ուրիշի օգնության կարիք ունի,
- մանրամասնորեն բացատրի նրան քվեարկության ընթացակարգերը:

Ուշադրությո՛ւն

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողի հետ խոսելու ժամանակ **չպետք է** արտահայտի ափսոսանք:

Սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց մասնակցությունը քվեարկությանը

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, նա իրավունք ունի, իրեն օգնելու համար, քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65.3).

- ընտրական հանձնաժողովի անդամի,
- թեկնածուի,
- ընտրական սուբյեկտի ներկայացուցչի,
- դիտորդի,
- մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի:

Տեսողությունից զուրկ և տեսողական խնդիրներ ունեցող ընտրողների հետ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պետք է հետևյալ կերպ վարվեն.

- Տեսողությունից զուրկ ընտրողին հարցնեն, թե արդյոք նրան օգնություն անհրաժեշտ չէ՞: Համաձայնության դեպքում պետք է կանգնեն նրա կողքին և ձեռք մեկնեն նրան այնպես, որ մի թեթև դիպչնե նրա դաստակին:
- Խոսեն հստակ և դանդաղ:

Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը.

- խնդրում է ընտրողին ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
- ընտրողին բացատրում է այն ընթացակարգը, որ իրականացնում է ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը,
- ընտրողին ընտրական քվեաթերթիկը փոխանցում է հատուկ շրջանակի մեջ տեղադրված վիճակում (Լուսանկար 1),
- տեսողական խնդիրներ ունեցող ընտրողին առաջարկում է խոշորացնող տեսապակի (լինզա) (Լուսանկար 2):

Ուշադրությո՛ւն

Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի սեղանին անպայման պետք է դրված լինի ընտրական քվեաթերթիկի շրջանակ/հատուկ ձև (1 հատ) և խոշորացնող տեսապակի՝ լինզա (2 հատ):
Շրջանակի/հատուկ ձևի մեջ առկա յուրաքանչյուր շրջանաձև կտրվածք պետք է համընկնի քվեաթերթիկում առկա ընտրական սուբյեկտի հերթական համարներին:
Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը պարտավոր է տեսողությունից զուրկ ընտրողին տեղեկատվություն տրամադրել ընտրական քվեաթերթիկում առկա ընտրական սուբյեկտների հերթականության մասին:

Լուսանկար 1.

Քվեաթերթիկը լրացնելու շրջանակ/հատուկ ձև

Լուսանկար 2.

Խոշորացնող տեսապակի՝ լինզա

Վերին վերջույթներ չունեցող ընտրողների հետ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պետք է հետևյալ կերպ վարվեն. (ԿԸՀ-ի որոշում №20/2012)

- չանցկացնեն նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգեր,
- ընտրողին ընտրական քվեաթերթիկ տրամադրելիս՝ ընտրողների գրանցում իրականացնողը ընտրողների միասնական ցուցակի «ընտրողի ստորագրություն» սյունակում անում է գրառում՝ «ֆիզիկական վիճակ», և հաստատում սեփական ստորագրությամբ:

Ուշադրությո՛ւն

Վերին վերջույթներ չունեցող ընտրողին քվեարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է ուրիշի օգնություն: Նրա կողմից ընտրված անձը, տվյալ ընտրողի փոխարեն, օգնում է նրան քվեախցիկում լրացնել ընտրական քվեաթերթիկը: Ինչպես նաև, նրա ներկայությամբ ընտրական քվեաթերթիկը զետեղում է հատուկ ծրարի մեջ, որը գցում է քվեատուփի մեջ:

Սայլակից օգտվող ընտրողների հետ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պետք է հետևյալ կերպ վարվեն.

- Եթե զրույցը մեկ րոպեից ավել շարունակվի, նստեն նրա դիմաց և այնպես խոսեն հետը.
- ազատեն ճանապարհը, որպեսզի սայլակից օգտվող ընտրողը քվեարկության սենյակում կարողանա ինքնուրույն տեղաշարժվել:

Ուշադրությո՛ւն

Եթե ընտրական տեղամասը հարմարեցված է (շենքն ունի թեքահարթակ կամ/և պարզ հարմարեցում), անհրաժեշտ է քվեարկության սենյակում տեղադրվի հատուկ քվեախցիկ **(Լուսանկար 3):**
Կտրականապես արգելվում է հենվել սայլակին կամ սայլակից օգտվող ընտրողին ինքնակամ տեղաշարժելը:

Լուսանկար 3.

Հատուկ քվեախցիկ

Լսողությունից զուրկ և լսողության խնդիր ունեցող ընտրողների հետ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պետք է հետևյալ կերպ վարվեն.

- Եթե ընտրողը մատնանշում է, որ ինքը չի լսում կամ չի կարող խոսել, նրա հետ շփվեն գրավոր ձևով:
- Եթե ընտրական տեղամաս եկած ընտրողը չի կարող խոսել (լսողությունից զուրկ է/կամ լսողության խնդիր ունի) և չգիտի քվեարկության ընթացակարգը, ցույց տան քվեարկությանը մասնակցությունն արտացոլող պաստառը (Լուսանկար 4):

Լուսանկար 4.

Քվեարկությանը մասնակցությունն արտացոլող պաստառ

Ուշադրությո՛ւն

Լսողությունից զուրկ և լսողության խնդիր ունեցող ընտրողների հետ խոսելիս նայեք ուղիղ նրանց:
Լսողությունից զուրկ և լսողության խնդիր ունեցող ընտրողը, ԿԸՀ-ի կայքէջում գրանցվելուց հետո, ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոն տեսազանգ կատարելու և ընտրական տեղամասում ժեստերի լեզվին տիրապետող օպերատորի ծառայությունից օգտվելու հնարավորություն ունի:

Աջակցություն ստացող անձանց հետ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պետք է հետևյալ կերպ վարվեն.

- Եթե աջակցություն ստացող անձը չի կարող խոսել կամ չգիտի քվեարկության ընթացակարգը, ցույց տան քվեարկությանը մասնակցությունն արտացոլող պաստառը:

Ուշադրությո՛ւն

Հիշե՛ք, որ աջակցություն ստացող անձը քվեարկությանը կարող է մասնակցել ինքնուրույն կամ ուրիշի օգնությամբ (Ընտրական օրենսգիրք՝ Հոդված 3. ա.գ, 65.3):

ՍՀՈՒ ընտրողների քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ վիճակագրության վարում

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները քվեարկության օրը պետք է լրացնեն ՍՀՈՒ անձանց ընտրություններին մասնակցելու վիճակագրության աղյուսակ (Աղյուսակ 1, Աղյուսակ 2) և քվեարկությունն ավարտվելուց հետո մյուս ընտրական փաստաթղթերի հետ մեկտեղ փոխանցեն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Վիճակագրության աղյուսակը լրացվում է ինչպես ընտրական տեղամասում (տե՛ս՝ Աղյուսակ 1), այնպես էլ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփից օգտվելու դեպքում (տե՛ս՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 1.

№ ____ ընտրատարածք № ____ տեղամասային ընտրական հանձնաժողով
Ընտրատեղամաս եկած ՍՀՈՒ ընտրող

N	ՍՀՈՒ ընտրող	Ինչ ծառայությունից օգտվեց	Ընդամենը
1	Սայլակից օգտվող/ ֆիզիկական սահմանափակում ունեցող	Ինքնուրույն մասնակցեց ընտրություններին	
		Ուրիշի օգնությամբ	
2	Լսողությունից զուրկ/ լսողության խնդիր ունեցող	Ինքնուրույն մասնակցեց ընտրություններին	
		Ուրիշի օգնությամբ	
3	Գործունակ հոգեբանական-սոցիալական կարիք ունեցող անձ (աջակցություն ստացող)	Ինքնուրույն մասնակցեց ընտրություններին	
		Ուրիշի օգնությամբ	
4	Տեսողությունից զուրկ	Քվեարկություն ընտրական քվեաթերթիկը լրացնելու շրջանակի/ հատուկ ձևի օգտագործմամբ	
		Ուրիշի օգնությամբ	
5	Տեսողական խնդիրներ ունեցող	Քվեարկություն խոշորացնող լինզայի օգտագործմամբ	

Աղյուսակ 2.

№ ____ ընտրատարածք № ____ տեղամասային ընտրական հանձնաժողով
ՍՀՈՒ ընտրող, ով քվեարկությանը մասնակցել է շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով

N	ՍՀՈՒ ընտրող	Ընդամենը
1	Սայլակից օգտվող/ֆիզիկական սահմանափակում ունեցող	
2	Լսողությունից զուրկ/լսողության խնդիր ունեցող	
3	Գործունակ հոգեբանական-սոցիալական կարիք ունեցող անձ (աջակցություն ստացող)	
4	Տեսողությունից զուրկ	
5	Տեսողական խնդիրներ ունեցող	

ԿԸՀ-ի և Ուսուցման կենտրոնի պաշտոնական կայքէջերը հարմարեցված են տեսողությունից զուրկ և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար

www.cesko.ge

www.electionreforms.ge

ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոն 2 51 00 51